



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՈՒ ՍՅՈՒՆԵՐԸ

(Ս. ՍԱՀԱԿ և Ս. ՄԵՍՐՈՊ)



Եր Եկեղեցին տարվա ընթաց-
ում երեք հանդիսավոր առիթ-
ներով պանծացնում է հիշա-
տակը սուրբ քարգմանիչ վար-
դապետներին:

Այդ տոներինց առաջինն է «Մերոյն Խա-
հակայ Պարբէի հայրապետին մերոյ», վար-
դանանց շաքարվա նախօրյակին, երբ փա-
ռաբանվում է Սահակ Պարբէի կիսադարյան
և բազմերայտ հայրապետութիւնը Լուսա-
վորչի Գահի վրա:

Հովիսին՝ միասին է տոնվում երկու մեծ
արբերի, հայ մշակույթի երախտաշատ վաս-
տակավորների՝ «սրբոց քարգմանչացն մե-
րոց Սահակայ և Մեսրոպայ» հիշատակը:

Առաջին տոնը երբ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒ-
ՌԻ ՏՈՆՆ է, ապա երկրորդը՝ Հայրապետա-
կան Աթոռի հովանու տակ, գրեթէ գյուտով և
Աստվածաշնչի հայերեն քարգմանութեամբ
սկզբնավորված ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ է:

Քարգմանչաց երրորդ տոնը, հոկտեմբեր
ամսին, տոնն է գերազանցորեն Ս. Սահակի
և Ս. Մեսրոպի առաջ ծննդադրած և ապա
երանց շնչի տակ ապրած և ստեղծագործած
ՀԱՅ ԴՐԻ ՌԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐՆԵ-
ՐԻ, որոնք սերնդից սերունդ փոխանցել են
հավատարմութեամբ հայ դպրութեան ու գրա-
կանութեան սերը և քարգմանել են Աստուծո
խոսքը ժողովրդին՝ նոր շնչով, նոր գեղեց-
կութեամբ:

Մեր Եկեղեցին վաղուց իր սիրելի արբերի
կարգն է դասել հայ մշակույթի և մեր ժողո-
վրդի հոգևոր-իմացական լուսավորության
գործին նվիրված մեծ վաստակավորներին:

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի խնկելի անուն-
ները անխզելիորեն կապված են հայ գրեթէ
գյուտի և Աստվածաշունչ Գրոց հայերեն
քարգմանութեան հետ, որոնցով նրանք մեր
կրօնական և ազգային զգացմունքների առաջ
հանդիսացել են մեր Մայրենի Եկեղեցու զույգ
սյուները, Հայրենիքի պաշտպանները, մեր
ժողովրդի հաստատությունն ու գործությունը:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, «Անեղին
իմաստը զարդարելով», «հաստատեցին
զԱթոռ Մերոյն Գրիգորի, քարգմանութեամբ
նշանագրութեան»: Նրանց՝ երկու Ս. Լուսավո-
րիչների Եկեղեցանվեր ջանքերի շնորհիվ,
«պայծառագեցան Եկեղեցիք Հայաստա-
նեայց» և կենդանի գիրն ու գրականությունը
հաստատվեցան հայ հողի և հայ հոգիների
մեջ:

Գրեթէ գյուտը և Աստվածաշունչ գրոց
քարգմանությունը ծնունդն են Ե դարում
պատմականորեն հասունացած անհրաժեշ-
տության և ազգային-Եկեղեցական տեսակե-
տից անկախ ու կրօնապես ինքնուրույն լի-
նելու ցանկության:

Դարի սկզբներին, երկու օտար և հակա-
մարտ ազդեցությունների վտանգավոր ռո-
տին մեջ ընկած մեր ժողովուրդն ու Հայրե-
նիքը առաջնորդվում էին դեպի անխուսափե-
լի կորուստը ազգային անկախության, զու-
ցե նաև գոյության: Անհրաժեշտ էր մեծ
վտանգի առաջ գրահապատել հայության
մարմինն ու հոգին մի նոր, կենսունակ ու
երիտասարդ ուժով: Դա հայ ինքնուրույն
մշակույթի, գրի ու գրականության ստեղ-
ծումն է:

Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ հիմք դրին հայ գրականության և դրանով երաշխավորեցին մեր ժողովրդի ազգային ու կրօնական գոյությունը:

Շատ էիշ բան գիտեմք մեր երկու մեծ կուսավորիչների մասին: Մեզ հասել են նրանց կենսագրության վերաբերյալ մի քանի ամփոփ տեղեկություններ միայն: Մեր պատմիչները տարված, հափշտակված և սխմաշացած Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ԳՈՐԾՈՎ, մոռացության են տվել նրանց ԱՆՁՆԱՎՈՐՈՒ, ԹՅՈՒՆՆԸ: Նրանք խոսել են ավելի ԳՈՐԾԻ, քան քե ԱՆՁԻ մասին: Եվ երբեք պատմականություն չէր այն, որ շատ սերունդների համար Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գործը հրաշքի պատմությունն էր և ներկայացված: Կենսագիրներից մեկը Կորյուն, որը գրել է Մեսրոպ Մաշտոցի «վարձ»-ը, տարված Ս. Մեսրոպի ՍԾԾ ԳՈՐԾՈՎ, մոռացել է նրա ՍԾԾ ԿՅԱՆՔԸ և սխմաշացումով գրել է գրեթե զրոյի գյուտի և Աստվածաշնչի քարգմանության հոյակապ «երևույթ»-ի մասին, քե «ե՛րբ և յորո՛ւմ ժամանակի և որպիսի՛ արամբ» կատարվեց այդ հրաշք-երևույթը մեր պատմության մեջ: Կորյունը և ուրիշներ պատմագրում են դեպքը ոչ քե «ի պարձանս գովորեան անձանց», «այլ նախանձավոր լինելով ՀՈԳԵՆՈՐԱՅԷՆ, որպեսզի «հայեցեալք յեյս զնացից նոցա նմանողք եղերով հաստոցն»: Գրեթե գյուտը, Աստվածաշնչի քարգմանությունը ոչ միայն Ե դարի համար էին, այլ «սա ի պահեստ յաիտեներից», այսինքն հայության և Հայ եկեղեցու հավերժության համար, հավիտենականության համար, «յառաջագոյն յաիտեների և ապա եկեղեցու, սկզբան և կատարածի»:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը գրեթե գյուտով և Աստվածաշունչ գրոց քարգմանությամբ մեզ տվեցին Ս. Գիրքը, «իմաստության լիակատար գանձարանը»: Նրանք Աստվածաշունչը քարգմանեցին հայերենի. «Մովսես մարգարեական դասով, Պողոս առաքելական գեղով հայաբարբառ հայերենախոս դարձան»: Միջնադարյան մի անանուն գրիչ գրում է, որ այդ հրաշքով «բացվեց հայի կապված բերանը, փարատվեց մեզը և հոգևոր ծիծր իր կարբ. շամբեց»: Գրեթե գյուտով, Ս. Գրոց քարգմանությամբ հայ ժողովուրդը գտավ իր գոյության և հավերժության ամուր կովանը և դարերի դիմաց վառեց իր կյանքի խարույկը: Ապա մեր վրայով անցան արյան փոթորիկներ, ապակու նման փշուր-փշուր փշովեցիներ, աստղերի նման ցրվեցիներ, բայց Մեսրոպյան տառերը մեզ կանգուն պահեցին մահվան գառիքափների վրա: Աստվածաշունչը՝ Հայ եկեղեցով հովանավորված հայ ժողովրդի գոյության խարխալը դարձավ:

«Ս. Գրիգոր աստվածային գիտության լույսը տվեց Հայոց Աշխարհին. առաջնորդելով նրան անգիտությունից դեպի ճշմարիտ աստվածգիտություն»,— գրում է Ղազար Փարպեցին, իսկ Ս. Սահակը «սկիզբը դրեց հայ մշակույթի գործին, օտար լեզուների անօգուտ մուրողությունից առաջնորդելով հոգեշահ և եկեղեցաշեն բանգիտության»:

Գրեթե գյուտով, Աստվածաշունչ գրոց քարգմանությամբ մեծ հեղաշրջում առաջ եկավ հայ ժողովրդի կյանքում և նրա աշխարհայացքի մեջ: «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհն Հայոց անպայման սխմաշելի լինէր,— գրում է Կորյունը և եզրակացնում,— սկիզբն դարձրանա հայոց լինէր սկիզբն մեծի գիտութեան»:

Մեծ և անզնախառն էի էր վաստակը եկեղեցու գույզ սյունների: Նրանց օրով, գրում է Ղազար Փարպեցին, «պայծառացան եկեղեցիները, նոր շէնդություն ստացան սրբերի վկայարանները, ծաղկեց նրանց մեջ Աստվածաշնչի ուսույթ: Քարգմանիչները մշտաբար վտակների նման հորդում էին իրենց մեկնաբանությունները: Մարգարեական խորհրդավոր խոսքերը յառաբանելով՝ մեղրի խորիսխից ավելի քաղցր հոգևոր խորիսխների առատ բարիքներով լցված սեղաններ էին դնում ամբողջ ժողովրդի առաջ... Հայոց բովանդակ աշխարհը լցվեց Տիրոջ գիտությամբ Սահակ սուրբ հայաբանի հոգևոր վտակներից, որպես ծովալիւր առատ ջրերից»:

Ահա Սահակ Պարբեի այսպիսի հոգեշահ գործունեության ակնարկելով, Խորենացին գրել է նրա մասին. «մահկանացու ծնեալ՝ անմահ զուրն յիշատակ երոզ»: Իսկ մեծ Օշականցին՝ «գերազանցեալ քան զամենայն, տեսչեամբ հրեշտակական, մտօք ծնեղական, բանիւք պայծառ, գործով ծուծկալ, մարմնով արտափայլեալ, խորհրդակցութեամբ մեծ, հաստով ուղիղ, յոստով համբերող, սիրով անկեղծատր, ուսուցանելով անձանձոյթ» (Խորենացի), բերեց «զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ», որով յուսավորեց «Թորգոմայ ազգ»-ը, «հայրական շափուն ծնեալ զծնունդս նորոգ և սխմաշելի Ս. Աշովն իւրով, զնշանագիրս հայերէն լեզուի»:

Հայոց լեզուն, հայ գրականությունը, հայ ժողովրդի ազգային գոյության պահպանման, ամրապնդման գործում պատմական մեծ նշանակություն են ունեցել անցյալում և ունեն այժմ էլ: Ս. Քարգմանիչների հիշատակի մեծարումն ու ոգեկոչումը, այսօր ավելի քան մի այլ ժամանակ, սրբազան պարտականություն է դնում յուրաքանչյուր հայ մարդու վրա, մտավորականության վրա՝ աշխի լույսի պես պահել ու պահպանել հայոց մեծասխմաշ լեզուն մեր եկեղեցիներում, մեր բնտանիքներում, պայքարել օտար լեզուների ու դարոց-

ների ապագգայնացնող ազդեցությունների դեմ, դաստիարակել նոր սերունդը բարգմանչաց ոգով և շնչով, ընդհանրացնել, տարածել հայ գիրն ու գրականությունը:

Միայն և միմիայն մայրենի լեզվի, ինձնուրույն մշակույթի պահպանմամբ կարելի կլինի գորավոր պատենշ կանգնեցնել մանավանդ Սփյուռքում մեր կյանքին սպառնացող վտանգների դեմ:

«Ա՛խ, լեզո՛ւն, լեզո՛ւն, լեզուն որ շըլի մարդ ինչի՞ն նման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ինչո՞վ կարես ասել, թե ո՞ր ազգիցն ես: Ինչ ֆաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր կաթը նրա համար շաֆարից էլ ա անուշ, մեղրից էլ» (Արույան):

Հայ ժողովրդի անմահ գավակ, մեծ լուսավորիչ ու հայրենասեր Խաչատուր Արույանի բերանով խոսում են հենց իրենք, մեր բարգմանիչ-լուսավորիչները՝ Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը:

Մեր անմոռանալի լուսավորիչ բարգմանիչների անմահ գործի հիշատակը լավա-

գույնս պահելու միջոցն է՝ սիրել ու տարածել հայոց լեզուն, հայ գիրն ու գրականությունը, պայքարել հայ լեզվի աղավաղումների և աղնատումների դեմ:

Վեհափառ Հայրապետը ֆաղցր ու պատասխանատու պարտավորություն է դրել մեր բոլոր թեմերի առաջնորդների, թեմական խորհուրդների և հավատացյալ ժողովրդի վրա՝ գուրգուրել ու աչքի լույսի պես պահել մեր մշակութային արժեքները, սիրել ու տարածել մեր մեծասական լեզվով գրված հարուստ գրականությունը, մեր դարավոր ու նվիրական ավանդները, որոնք ձեռք են բերվել մեր պանծալի նախնիքների արյունով և կյանքով:

Մեր անմոռանալի լուսավորիչ-բարգմանիչների պայծառ հիշատակը այսօր էլ խանդավառում է հայ հավատացյալ ժողովրդին՝ սրբությամբ պահել ու պահպանել անցյալից ավանդ ստացած հոգևոր ժառանգությունն ա՛յն հաստատուն համոզմունքով և սրտանուշ հավատով, որ, իրապես, «մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը»:

